ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ N 2

«ԱՔ-ԲՏ-ՊԸԱՇՁԲ-02-17» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Արմավիր

04.05.2017թ.
Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Գրիգորյան
Անդամներ՝ Պ. Տերտերյան, Ա. Միրզոյան,
Մրցույթի համակարգող՝ Ա. Թաշչյան:

1. Հայտերի բացման և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

1.1 Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ ըստ չափաբաժինների.

Հ/Բ N	Աշխատանքի անվանումը	Նախահաշվային գին
1	Արմավիրի քաղաքային աղբավայրի մաքրման աշխատանքներ	**4495800** (չորս միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր)

1.2 Հանձնաժողովի նախագահին ներկայացվեց հայտ ներկայացրած մասնակիցների ցուցակը: Հայտը ներկայացվել է փակ սոսնձված ծրարով, որի վրա կատարված են <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> գրառումը, ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինչպես նաև պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը:

N	Մասնակցի անունը	Հասցեն և կապի միջոցները	Հայտ ներկայացնելու ամսաթիվ, ժամ
1	<<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ	ք. Արմավիր, Շահումյան 31 հեռ. 0237-2-22-95, legenda.legenda96@liat.am	03.05.2017թ. ժ. 15:30

Հանձնաժողովը որոշեց բացել ներկայացված հայտը: Հայտը բացվել է 2017 թվականի մայիսի 4-ին, ժամը 12:00-ին, հասցե՝ քաղաք Արմավիր, Հանրապետության 32:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ <<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ԱՔ-ԲՏ-ՊԸԱՇՁԲ-02-17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին: Հանձնաժողով որոշեց <<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Գնային առաջարկների մասին

3.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ <<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկն է՝

<<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ				
Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Արմավիրի քաղաքային աղբավայրի մաքրման աշխատանքներ	3 662 130	732 430	4394560 (չորս միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր վաթսուն)

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3.2 Հիմք ընդունելով <<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը հանձնաժողովը ընդունեց որոշում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԼԵԳԵՆԴԱ>> ՍՊԸ-ին՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին

4.1 Հանձնաժողովը որոշեց, որ հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացվելու է 2017 թվականի մայիսի 10-ին, ժամը 12:00-ին, հասցե՝ քաղաք Արմավիր, Հանրապետության 32:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ _____ Լ. Գրիգորյան
Անդամներ՝ _____ Պ. Տերտերյան
_____ Ա. Միրզոյան
Մրցույթի
համակարգող _____ Ա. Թաշչյան